Հաստատված է՝
Տնօրինության 23.04.2026թ.-ի
Թիվ DEC 12-34 արձանագրությամբ:
ՈՒԺի մեջ է մտնում 12.05.2026թ.-ից

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԸ

Հաճախորդ	Բանկում հաշվետեր ֆիզիկական և իրավաբանական անձ/անհատ ձեռնարկատեր
Բանկային հաշվի բացում և սպասարկում	Համաձայն բանկում գործող սակագների

Արժույթներ և սակագներ[1]	USD	EUR	CNY	RUB	Բանկի համար ընդունելի այլ արժույթ
OUR	0.15% նվազագույնը՝ 10 000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 80 000 ՀՀ դրամ	0.15% նվազագույնը՝ 10 000 ՀՀ դրամ, առավելագույնը 80 000 ՀՀ դրամ	0.15% նվազագույնը՝ 10 000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 80 000 ՀՀ դրամ	3000 ՀՀ դրամ	0.2% նվազագույնը՝ 10 000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 80 000 ՀՀ դրամ
GOUR	ի հավելումն OUR սակագնի լրացուցիչ 12 000 ՀՀ դրամ	ի հավելումն OUR սակագնի լրացուցիչ 12 000 ՀՀ դրամ	ի հավելումն OUR սակագնի լրացուցիչ 12 000 ՀՀ դրամ	-	ի հավելումն OUR սակագնի լրացուցիչ 12 000 ՀՀ դրամ
BEN	5 000 ՀՀ դրամ	5 000 ՀՀ դրամ	5 000 ՀՀ դրամ	-	-

Հաղորդագրության կրկնօրինակի տրամադրում	7 500 ՀՀ դրամ

[1] **Մինչև 31.12.2026թ.-ը փոխանցումները կիրականացվեն 0% միջնորդավճարով**

TC 07-02#1

Հաստատված է՝
Տնօրինության 23.04.2026թ.-ի
Թիվ DEC 12-34 արձանագրությամբ:
ՈՒԺի մեջ է մտնում 12.05.2026թ.-ից

Փոխանցումները հավաստող հաղորդագրության, փաստաթղթի կրկնօրինակի տրամադրում մինչև 3 ամիս վաղեմության	Սակագին չի կիրառվում
Փոխանցումները հավաստող հաղորդագրության, փաստաթղթի կրկնօրինակի տրամադրում 3 ամսից ավել վաղեմության	1 000 ՀՀ դրամ
Փոխանցումների տվյալների փոփոխություն կամ չեղյալ համարում	25 000 ՀՀ դրամ
Հաճախորդի դիմումի համաձայն վճարման հանձնարարականի տվյալների փոփոխումը և չեղյալ համարումը նախքան Բանկի կողմից փոխանցման փաստացի կատարումը	Սակագին չի կիրառվում
ԵՎՐՈՊԱՅԻՑ[2] ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄ	
Հաճախորդ	Բանկում եվրո արժույթով հաշվետեր ֆիզիկական անձ
IBAN հաշվի բացում և սպասարկում	Սակագին չի կիրառվում
IBAN հաշվի արժույթը	եվրո
IBAN հաշվի բացման ժամկետ	Անժամկետ
IBAN հաշվով մեկ փոխանցման առավելագույն սահմանաչափ	1 000 եվրո
IBAN հաշվով մեկ ամսվա ընթացքում փոխանցումների առավելագույն սահմանաչափ	5 000 եվրո

[2] SEPA անդամ երկրները ներկայացված են Եվրոպական ԿԲ պաշտոնական կայք էջում՝ Single Euro Payments Area (SEPA) և Հավելված 1-ում

TC 07-02#1

Հաստատված է՝
Տնօրինության 23.04.2026թ.-ի
Թիվ DEC 12-34 արձանագրությամբ:
ՈՒժի մեջ է մտնում 12.05.2026թ.-ից

Փոխանցումների ստացման (հաշվեգրման) միջնորդավճար	Սակագին չի կիրառվում

Ծանոթություն
Սակագնի կիրառման ժամանակ հիմք է ընդունվում տվյալ պահին գործող ՀՀ ԿԲ փոխարժեքը:

TC 07-02#1

Հաստատված է՝
Տնօրինության 23.04.2026թ.-ի
Թիվ DEC 12-34 արձանագրությամբ:
ՈՒԺի մեջ է մտնում 12.05.2026թ.-ից

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բանկը միջազգային փոխանցումներն իրականացնում է անկանխիկ եղանակով գործարքի կատարման արժույթին համապատասխան բանկային հաշվով:

2. SWIFT համակարգով փոխանցումների ծառայությունը հնարավորություն է տալիս Ֆաստ Բանկ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) հաճախորդներին բանկային հաշվով իրականացնել և ստանալ միջազգային փոխանցումներ, իսկ IBAN հաշվով ստանալ փոխանցումներ SEPA գոտու անդամ երկրների բանկերից:

3. Յուրաքանչյուր աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև ժամը 15:30 ներկայացված վճարման հանձնարարականները կամ ստացված միջազգային փոխանցումների հաշվեգրումները Բանկի կողմից կատարվում են նույն բանկային օրը, իսկ ժամը 15:30-ից հետո ներկայացված վճարման հանձնարարականները կամ ստացված միջազգային փոխանցումների հաշվեգրումները՝ հաջորդ բանկային օրը:

4. Միջազգային փոխանցումների իրականացման ժամանակ թղթակից բանկի ընտրությունը կամ փոփոխությունը կատարվում է Բանկի կողմից ինքնուրույն առանց հաճախորդին տեղյակ պահելու՝ առաջնորդվելով Բանկի հետ համագործակցող բանկերի ցանկով:

5. Բանկը միջազգային փոխանցումները իրականացնում է 3՝ փոխանցման եղանակով՝ OUR, GOUR, BEN:

1) OUR եղանակի դեպքում թղթակից բանկի ծախսերը կրում է Բանկը, իսկ առկայության դեպքում բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից:

2) GOUR եղանակի դեպքում թղթակից և առկայության դեպքում բոլոր միջնորդ բանկերի ծախսերը կրում է Բանկը՝ գումարն ամբողջությամբ (առանց նվազեցումների) փոխանցելով ստացողին:

3) BEN եղանակի դեպքում թղթակից և առկայության դեպքում բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից:

6. Բանկն իրավունք ունի մերժել փոխանցումը, եթե վերջինս չի համապատասխանում իր կամ թղթակցային կազմակերպության ներքին իրավական ակտերին կամ միջազգային օրենսդրության պահանջներին, ինչպես նաև Բանկը պատասխանատվություն չի կրում թղթակից բանկերի կամ միջնորդ բանկերի կողմից գործարքը մերժելու, կասեցնելու կամ սառեցնելու, սանկցիաների կիրառման պատճառով գումարը շահառուի բանկային հաշվին չկրեդիտագրելու կամ կրեդիտագրման ժամկետների համար:

7. Բանկը պատասխանատվություն չի կրում հաճախորդի կողմից տրված թերի կամ սխալ տվյալներով հանձնարարականների հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար, ինչպես նաև չեղարկման, թղթակից կամ միջնորդ բանկերի կողմից գործարքների մերժման արդյունքում առաջացած լրացուցիչ ծախսերի (պահումների) համար:

8. Փոխանցումների իրականացման համար, ինչպես նաև հետո Բանկի և/կամ թղթակից բանկի կողմից կարող են պահանջվել լրացուցիչ տեղեկություններ, փաստաթղթեր, գումարի ծագման կամ փոխանցման հիմնավորման վերաբերյալ:

9. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Բանկը կարող է հաճախորդից՝ «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին

Հաստատված է՝
Տնօրինության 23.04.2026թ.-ի
Թիվ DEC 12-34 արձանագրությամբ:
ՈՒԺի մեջ է մտնում 12.05.2026թ.-ից

(նման պահանջի առկայության դեպքում):

10. Միջազգային փոխանցման չեղարկման, թղթակից բանկի կողմից հայտի մերժման համար Բանկին վճարված միջնորդավճարը ենթակա չէ հետ վերադարձման, այդ թվում թղթակից բանկի կողմից հայտի մերժման դեպքում: Եթե փոխանցումը չեղարկվել է մինչև Բանկի կողմից կատարելը, հաճախորդին վերադարձվում է նաև փոխանցման կատարման համար գանձված միջնորդավճարը, իսկ փոխանցման միջոցների վերադարձը իրականացվում է նույն բանկային օրը:

11. Եթե փոխանցված միջոցներն արդեն վճարված են շահառուին, ապա Բանկը պատասխանատվություն չի կրում գումարների վերադարձման համար: Փոխանցված միջոցները շահառուի կողմից չստանալու դեպքում փոխանցված դրամական միջոցների հետ վերադարձման համար Բանկը պատասխանատվություն չի կրում: Այն դեպքում, երբ գումարը դեռ չի կրեդիտագրվել շահառուի հաշվին և հաճախորդը դիմել է Բանկին գործարքը չեղյալ համարելու համար, ապա գործում են փոխանցումը չեղյալ համարելու կանոնները:

12. Փոխանցումների տվյալների փոփոխության և գործարքը չեղյալ համարելու վերաբերյալ ստացված դիմումներին Բանկի կողմից ընթացք է տրվում առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Ծառայության վերաբերյալ ամբողջական տվյալներին կարող եք ծանոթանալ www.fastbank.am կայքում, ինչպես նաև զանգահարելով միասնական տեղեկատվական ծառայություն՝ (+37410) 510 000 հեռախոսահամարով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ